ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՈՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/10/1

ք. Երևան

«21» փետրվարի 2017թ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆ.Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 477000 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սփյուռքի նախարարություն	«Բևեռային ուղի» ՍՊԸ
ք. Երևան, Վ.Սարգսյան 3	ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ.բն.6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011018604	Հ/Հ 1510032345990100
ՀՎՀՀ 02705838	ՀՎՀՀ 02228306
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«28» փետրվարի 20 թ. կնքված
ՆՀՀՍՆ-ԳՀԾՁԲ-18/10/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ, որից	դրամ	477000	1	ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ սփյուռքի նախարարություն	Պայմանանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 2018թ դեկտեմբերի 15-ը, որից՝
1.1		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet P1102d) տպիչի համար /առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		63000	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ
1.2		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet P2055d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		36000	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.3		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet P1505n) տպիչի համար /առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		144000	/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 15 / տասնհինգ/ անգամ
1.4		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet 1018) տպիչի համար /առավելագույնը 15 անգամ տարվա ընթացքում		27000	/առավելագույնը 15 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 3/երեք/ անգամ
1.5		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet PRO M125) տպիչի համար /առավելագույնը 15 անգամ տարվա ընթացքում		24750	/առավելագույնը 15 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 3/երեք/ անգամ
1.6		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP Color laserJet 2600n) տպիչի համար, սև, դեղին, կապույտ, կարմիր /յուրաքանչյուր գույնը առավելագույնն 6 անգամ/		36000	/յուրաքանչյուր գույնը առավելագույնն 6 անգամ՝ 24 անգամ/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 2/երկու/ անգամ
1.7		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (Xerox Copycentre c118) պատճենահանման մեքենայի համար 1 անգամ տարվա ընթացքում		6000	1անգամ		3-րդ եռամսյակ 1/մեկ/ անգամ
1.8		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (Canon IR 2018) պատճենահանման մեքենայի համար /առավելագույնը 2 անգամ տարվա ընթացքում		6000	2անգամ		3-րդ եռամսյակ 1/մեկ/ անգամ և 4-րդ եռամսյակ 1/մեկ/ անգամ
1.9		Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP LaserJet P1102d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		12000	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.10		Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP LaserJet P2055d) տպիչի համար առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		18000	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ

1.11		Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP LaserJet P1505n) տպիչի համար/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		36000	/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 15 / տասնհինգ/ անգամ
1.12		Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP laserjet 1018) տպիչի համար /առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		18000	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ
1.13		Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP laserJet PRO M125) տպիչի համար /առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		18000	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ
1.14		Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP Color laserjet 2600n) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		1500	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/անգամ/ անգամ
1.15		Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (Xerox Copycentre c118) պատճենահանման մեքենայի համար /առավելագույնը 2 անգամ տարվա ընթացքում/		3000	/առավելագույնը 2 անգամ տարվա ընթացքում/		3-րդ եռամսյակ 1/մեկ/ անգամ և 4-րդ եռամսյակ 1/մեկ/ անգամ
1.16		Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոներր (Canon IR 2018) պատճենահանման մեքենայի համար /առավելագույնը 2 անգամ տարվա ընթացքում/		6000	/առավելագույնը 2 անգամ տարվա ընթացքում/		3-րդ եռամսյակ 1/մեկ/ անգամ և 4-րդ եռամսյակ 1/մեկ/ անգամ
1.17		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (HP LaserJet P1102d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.18		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (HP LaserJet P2055d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.19		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (HP LaserJet P1505n) տպիչի համար /առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		1800	/առավելագույնը 60անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 15/տասնհինգ/ անգամ
1.20		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (HP laserJet PRO M125) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.21		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (HP laserJet 1018) տպիչի համար		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ

		/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում					
1.22		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (HP Color laserjet 2600n) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		150	/առավելագույնը 5անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.23		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (Xerox Copycentre c118) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		150	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.24		Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը (Canon IR 2018) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		150	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.25		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP LaserJet P1102d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.26		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP LaserJet P2055d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.27		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP LaserJet P1505n) տպիչի համար /առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		1800	/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 15/տասնհինգ/ անգամ
1.28		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP laserJet PRO M125) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.29		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP laserJet 1018) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում/		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.30		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP Color laserjet 2600n) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		150	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.31		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի		150	/առավելագույնը 5 անգամ տարվա		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ

		դանակը (Xerox Copycentre c118) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում			ընթացքում		
1.32		Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (Canon IR 2018) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		150	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.33		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP LaserJet P1102d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.34		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP LaserJet P2055d) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.35		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP LaserJet P1505n) տպիչի համար /առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		900	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ
1.36		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP laserJet 1018) տպիչի համար /առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		900	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ
1.37		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP laserJet PRO M125) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.38		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP Color laserjet 2600n) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		150	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.39		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (Xerox Copycentre c118) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		75	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.40		Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (Canon IR 2018) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		75	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.41		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP LaserJet P1102d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		900	/առավելագույնը30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ

1.42		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP LaserJet P2055d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		900	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ
1.43		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP LaserJet P1505n) տպիչի համար/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		1800	/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 15/տասնհինգ/ անգամ
1.44		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP laserJet 1018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		900	/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 7/յոթ/ անգամ
1.45		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP laserJet PRO M125) տպիչի համար /առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		600	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.46		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP Color laserjet 2600n) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		75	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.47		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (Xerox Copycentre c118) տպիչի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		75	/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ
1.48		Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (Canon IR 2018) տպիչի համար/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		300	/առավելագույնը 20 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 5/հինգ/ անգամ
1.49		Թմբուկի փոխարինում (Xerox Copycentre c118) պատճենահանման մեքենայի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում		3000	/առավելագու 5 անգամ տարվա ընթացքում		Յուրաքանչյուր եռամսյակ առավելագույնը 1/մեկ/ անգամ

***Նախատեսված ծառայությունների մատուցման /վերոնշյալ/ ընթացքում օգտագործվող պահեստամասերի և նյութերի տրամադրումը իրականացվում է Կատարողի կողմից: Լիցքավորման, սպասարկման, փոխարինման և վերանորոգման ենթակա սարքերի տեղափոխումն ու վերադարձն իրականացվում է Կատարողի կողմից Պատվիրատուի հասցեից: Ծառայության մատուցը իրականացվում է Պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018604
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ.բն.6
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510032345990100
ՀՎՀՀ 02228306

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«28» փետրվարի 20 թ. կնքված
ՊՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/10/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311100/1	Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			477000
						109500			213100			477000			

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տիյուղի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018604
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ.բն.6
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510032345990100
ՀՎՀՀ 02228306

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«22» փետրվարի 20 թ. կնքված
ՆՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/10/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«28» փետրվարի 20 թ. կնքված
ՆՀՀՄՆ-ԳՀՇՁՊ-18/10/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն